


խանը Կոստանդին կաթողիկոսին, ինչպես եւ Յովհաննէս Աւրպելու, Զաքարիա Մործորեցու եւ Եսայի Նչեցու թղթակցութիւնները բաւարար չափով զաղափար են տալիս այդ առթիւ եղած անց ու դարձին (*):

Դոցանից հնագոյնը Սիւնեաց Յովհաննէս (Աւրպել) եւ Ստեփանոս (Տարսայիճ) եպիսկոպոսները եւ Գլաձորի Դաւիթ ու Եսայի վարդապետների պատասխանն է Կոստանդին կաթողիկոսին, գրուած ոչ վաղ քան 1314 թուականը, քանի որ տեսանք, Ստեփանոս-Տարսայիճն այդ թուին պատրաստուում էր դեռ եւս վարդապետական եւ եպիսկոպոսական աստիճան ստանալու, մինչդեռ թղթի մէջ որպէս եպիսկոպոս է յիշուած: Թուղթը գրուած է Ատանայի ժողովից էլ մի կամ երկու տարի յետոյ, մինչեւ Կոստանդին կաթողիկոսի թուղթը Ատանայի ժողովի որոշումներով արեւելք հասնէր Գրիգոր հրաւիրակի հետ, խորհրդակցութիւն լինէր նախ Թաւրիզում Աւրպելու եւ Թաղէս առաքեալի առաջնորդ Զաքարիա Մործորեցու միջեւ եւ ապա զորքը դժուութեան ու բաժանման հասնէր, պէտք է ժամանակ անցնէր: Երկու տարուայ աննարկ կայ Աւրպելու Զաքարիային գրած թղթի մէջ, որ կաթողիկոսին ուղղած պատասխանից շատ ուշ չպէտք է լինի. ապա,




Պատկեր 223.

ուրեմն, այս թղթակցութիւնների ընդհանուր տարեթիւ կարող ենք 1317/18 թուականը համարել:

(*) Ձեռ. Էջմ. N° 2276, 264ա., նաև 2622, 156 եւ 4188, 524/573, (Յաւել. Գ. 9 եւ 10). Ձամբ. III. 306 ունի միայն Աւրպելու եւ Զաքարիայի թղթակցութիւնից քաղուած ք. նորան եւ առ հասարակ անյայտ է կաթողիկոսին ուղղուած թուղթը, Նչեցու շրջաբերականը եւ թղթակցութիւնները: Ձամեան, նորա հետ եւ Օրմանեան (Աղգապատում 1774) սըխալուում են Աւրպելու եւ Զաքարիայի թղթակցութիւնը կապելով Անաւարդեցու ժամանակի հետ:

Կաթողիկոսին ուղղուած թուղթը գրուած է այսպիսի հասցեով. «Աստուած պետականին մ գլխոյ շնորհօք լցեալ եւ հոգոյ նր. ներընդունակ եղեալ, գլուխ պատուական եւ տիեզերական կթղկա. եւ եպիսկոպետ Հայոց մեծաց տէր Կոստանդին», իբրեւ պատասխան այն թղթին, որ ստացել են «նրեաց եպիսկոպոս Սիւնեց. տէրի Յովանէս եւ տր. Ստփնա. եւ վրպետքս Դաւիթ



Պատկեր 224.

եւ Եսայի այլ մեր վրպապօքս եւ վանօրէօքս եւ ազատօքս»: Պատասխանից երեւում է, որ կաթողիկոսը առանձին նամակներ էր գրել աւելի մեղմ, իսկ «հասարակաբար» ուղարկուածը լի յանդիմանական բանիւ եւ սաստիւ կանոնադրել. «զորա հետ եւ անգիր հրաման «զմեզ պատուհասել իբրեւ զոչ արժանիս ձեր մհուրթե. եւ սրբալոյս միտմիս», մինչդեռ իրենք հայրական գուրթ, օրհնութիւն եւ խաղաղութիւն էին սպասում: Ուրիշ միութարութիւն չունին, բայց միայն «զԱՅ եւ զքաղցր ձեր կամքդ», իսկ այժմ «կշտամբանք եւ յանդիմանութի.» են ստանում: Կաթողիկոսը նոյն իսկ հայոց պատարագը թերի է համարում եւ անընդունելի Աստծուն (Չուր չխառնելու պատճառով), մինչդեռ Լուսաւորչից սկսած մինչեւ «առ քեզ